Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԼՅԻ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6. Լոռի – ցերեկային կենտրոն (Վանաձոր, Ալավերդի) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2025 -30.06.2025թթ. |
| Ներկայացման օր | 03.07.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 41 շահառուի. իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 14 ուղղորդում. միջամտություն/միջնորդում այլ կառույցներ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են հետևյալ թեմաներով դասընթացներ՝ «Ընտանիքին ուղղված սոցիալական բարեկեցության համակարգը ՀՀ-ում», «Համոզման նշանակությունը փոխհարաբերություններում. համոզման կանոնները», «Սոցիալական պաշտպանություն» հասկացողությունը:
  Հոգեբանական աջակցության շրջանակներում հոգեբանի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 18 խմբային հանդիպում 25 շահառուի հետ և անհատական խորհրդատվություն՝ 17 շահառուի հետ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 6 խմբակ՝
  - Ձեռագործություն և ջուլհագործություն,
  - Առողջապահական,
  - Գրական,
  - Հոգեբանական,
  - Նկարչական,
  - Խոհարարական:

  Վերոնշյալ խմբակներին մասնակցել է թվով 25 շահառու:
  Կազմակերպվել է թվով 12 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 41 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝
  - ✓ Մայրության և գեղեցկության օր (կենտրոնում եվ թիվ 25 դպրոցում);
  - ✓ Սուրբ Զատիկ,
  - ✓ Աշխատավորների միջազգային օր,

- ✓ Հաղթանակի օր,
- ✓ Շահառուների ծննդյան օրերի նշում (երեք անգամ),
- ✓ Էքսկուրսիա դեպի Զվարթնոցի տաճար և թանգարան, Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, Սբ. Հռիփսիմե, Սբ. Գայանե եկեղեցիներ և Հայոց այբուբենի հուշարձան Տառերի պուրակ:
- ✓ Երեխաների պաշտպանության միջազգային օր,
- ✓ Էքսկուրսիա դեպի մոտակա անտառ,
- ✓ Գրական հանդիպում Լոռու մարզային գրադարանի աշխատակցի հետ:

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է թվով 4 հանդիպում` ուղղված խմբային աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը, որին մասնակցել է 20 շահառու:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները` առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են կենտրոնի առօրյան ներկայացնող հետևյալ նյութերը`

- Էքսկուրսիա մոտակա անտառ (տե՛ս հետևյալ հղմամբ` https://surl.lu/goteez),
- Գրական հանդիպում Լոռու մարզային գրադարանի աշխատակցի հետ (տե՛ս հետևյալ հղմամբ` https://surl.li/rursky),
- Շահառուի ծննդյան օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ` https://surl.li/mwywsa),
- Էքսկուրսիա դեպի Զվարթնոցի տաճար, Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, Սբ.Հռիփսիմե, Սբ. Գայանե եկեղեցիներ, Հայոց այբուբենի հուշարձան Տառերի պուրակ (տե՛ս հետևյալ հղմամբ` https://www.facebook.com/permalink.php?story_fb d=pfbid02spQPrEsthp2k13iIP3YGLCGwC6GEfyNq6CgwU2nMrBEXCdSLwQZ1YVNBaAFkDyDl&id=100079550238160),
- Սուրբ Զատիկ (տե՛ս հետևյալ հղմամբ` https://surl.li/ixacwi),
- Աշխատավորների միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ` https://surl.lt/ijepfv),
- Մայրության և գեղեցկության օր (տե՛ս հետևյալ հղմամբ` https://surl.li/vfjxnn),
- Ֆիլմի դիտում (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid032GsFVf2qrKbHGoNxJNCGCHHn3PFrddx6UtBkMGJSD1DMAZSoKVXTgDbhGC8LKImAl&id=100079550238160),
- Շրջագործության խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ` https://surl.li/ctyacu),
- Նկարչական խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ` https://surl.li/pkoqpn),
- Սոցիալ-հոգեբանական դասընթաց (տե՛ս հետևյալ հղմամբ` https://surli.cc/easwxy):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- ➢ սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ➢ ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,

- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնի սոցիալական աշխատողը մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնում տեղի ունեցած աջակցող ցանցի տարածաշրջանային ֆորումին, որի հիմնական նպատակն է տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության ակտիվացումը, սոցիալական դեպքի վարման շրջանակներում ռեսուրսների ներգրավման և օգտագործման, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության բարձրացումը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 46/41 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 25 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 6 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 34 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 5.1 | Առողջապահական | 12 |
| 5.2 | գրական | 14 |
| 5.3 | Հոգեբանական | 6 |
| 5.4 | Նկարչական | 10 |
| 5.5 | ձեռագործության և ջուլհակագործության | 6 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 42 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 15 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Հոգեբանական անհատական խորհրդատվություն<br>Հոգեբանական խմբային աշխատանք | <br>17<br>25 |

Կազմակերպության ղեկավար Երվանդ Միքայելյան «03» 07. 2025թ

[illegible]